ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-------» հոկտեմբերի 2016թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N305-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 3-րդ և 5-րդ մասերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի մարտի 18-ի «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N305-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) N1 հավելվածում «Ավետիսյան Համբարձում-Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ» բառերը փոխարինել «Թերզյան Օֆելյա - Աջափնյակ վարչական շրջանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ» բառերով.

2) N1 հավելվածում «Ամիրյան Հասմիկ-Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ» բառերը փոխարինել «Ամիրյան Հասմիկ - Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ» բառերով.

3) N1 հավելվածը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ստեփանյան Սամվել - Աջափնյակ վարչական շրջանի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ».

4) N12 հավելվածում «Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի պետ» բառերը փոխարինել «Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Վետերանների խորհուրդ ՀԿ-ի նախագահ» բառերով.

5) N12 հավելվածը լրացնել նոր պարբերություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ավետիսյան Գևորգ - Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ՍԱՏԲ պետի տեղակալ

Ստեփանյան Մարինա «Հ. 16 Պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18 -Ի N 305-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի մարտի 18-ի «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N 161-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N305-Ա որոշմամբ հաստատվել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը:

Երևան քաղաքի ավագանու վերը նշված որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ղեկավարներին կից ստեղծված հանձնաժողովների անհատական կազմերում փոփոխությունների և լրացումների կատարումը պայմանավորված է հանձնաժողովի անդամ հանդիսացող աշխատակցի մահվամբ, հանձնաժողովի անդամի այլ պաշտոնի նշանակվելու, հանձնաժողովի կազմում փոփոխություն և նոր անդամներով լրացում կատարելու, հանձնաժողովում ընդգրկվածություն և դրա գործունեության լիարժեքությունն ապահովելու, ինչպես նաև նշված հանձնաժողովների աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու հանգամանքներով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 305-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌԸՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի 18-ի N305-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առընչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18 -Ի N 305-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի 18-ի N305-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ